

փառ Հայրապետն ամենայն հայոց արդէն  
առաջարկեալ է իր միջնորդութիւնը առ  
քաղաքական բարձրագոյն իշխանութիւնն,  
յորմէ կախումն ունի գործոյն յառա-  
ջատութիւնը :

Համաձայն յայտարարութեան հայոց  
Կոնսիստորիային Լորեանայ՝ նշանակուե-  
ցան յանդամակցութիւն վիճակային Լու-  
տենին տէր Պողոս տէր Լաչատուր և տէր  
Յարութիւն քահանայք ՚ի տեղի նախորդ-  
անդամոց տէր Լսահակ տէր Լստուածա-  
տուր և տէր Ստեփաննոս քահանայից .  
որք ըստ իւրեաց խնդրագործութեան  
արձակուեցան ՚ի պաշտօնէ :

Մ. Կրիլ :

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Լ՛րարատայ առաջին մասն Կրօնական  
դնելով , մտքերնիս այն չէ որ հաւատոյ  
խնդիրներու վրա իտի խօսինք ու հաւա-  
տոյ վէճեր նորոգենք , այլ ինչպէս գրել  
ենք մեր յայտարարութեան մէջ , որ ար-  
դէն հրատարակուած է , եկեղեցական կար-  
գաց և արարողութեանց յուժմէ՛ և երբ  
սկզբնաւորելուն վրա պիտի գրենք առա-  
ւելապէս ի գիտութիւն եկեղեցական պաշ-

տօնէից ազգիս . թէ հայոց եկեղեցւոյ  
նախնական ժամակարգութիւնը ինչ էր ,  
յուժմէ՛ մնաց և ո՛յք հետզհետէ ծաղ-  
կեցրին զայն . և որպիսի եկեղեցական ժո-  
ղովքներով սահմանադրուեցան . որոնք  
չատ կարևոր խնդիրներ են ազգիս եկեղե-  
ցականաց . և ձեռագրաց մէջ լինելով  
ցարդ՝ շատերին ևս անծանօթ . ուստի այս  
մասին տակը կ'ամփոփենք հայոց քրիս-  
տոնէութիւնը առաքելոց քարոզութեամբ  
և հայաստանեայց եկեղեցւոյ առաքելա-  
կան յաջորդութիւնը նոյնպէս ազգիս վե-  
րստին դարձը ՚ի կռապաշտութենէ յաստ-  
ուած գիտութիւն՝ սրբոյն Կրիգորի մեր  
բազմաչարչար լուսաւորին ձեռամբ , երբ  
որ ազգիս քաղաքական իշխանութիւնը ա-  
ռաքելոց քարոզութենէն ետքը բռնացել  
էր ազգի վրայ , և ՚ի տեղիս տեղիս վերըս-  
տին սկսել կռապաշտութիւն . սոցա ամենի  
հետ ևս ազգիս գրականութեան դարու-  
յառաջադէմութիւնը և ազգային գրոց  
գիւտը . և այլն :

Իսկ որքան որ Լ՛րարատայ պատմական  
մասը հայրենասիրաց սրտերը ՚ի հայրենիս  
կ'հրաւիրեն նախնեաց անցեալ մեծագոր-  
ծութեանց յիշատակներովը բերկրիլ , և  
ներկային վրա տխուր աչք ձգել ու ա-  
ղէկէզ սրտով մորմոքել , բայց այս բո-  
լոր ազգայնոց ազգութեան պարտքն է :

Լորբեմն ևս պատմականին մէջ թէև  
հայրենեաց դժբաղդ անցքերու վէպք կը  
կարդացուին , և նովաւ ազգին գլխաւորաց  
հայրենիք պաշտպանելու քաջարտութեան  
օրինակ պիտի առնուան , կամ դառն վշտաց

գաղափար մի, բայց և այս ընդհանուրին վերաբերեալ հետաքրքրութիւն մի է. որ քաջերէն զազգ և հայրենիք պահելու քաջութի կ'սորվին, և վատերէն իբրև հայրենեաց մատնտու եղողներէ կ'խորշին. շատ սակաւ կ'գտնուին մարդիկ մեր օրերը ազգերնուս մէջ որ ազգային պատմութեան թերթերը չգարծնեն, վատերը իրենց վատութեամբ չգատապարտեն, կամ քաջերուն կորստեան վրա գէթ սրտի ազգութեան սիրոյ աղբերէն կաթիլ մի արտասուք չթափեն: Մյս քարեղէն սրտերը պակասած են հիմա. քաջաց յիշատակները կ'անմահանան մարմնեղէն սրտերու մէջ. վատերը բիւր հազար անիծից արժանիք կ'առնուն ու կ'երթան. — մէկ խօսքով հայր իւր նախնի հայութեան կեդրոնը կ'դիմէ. Ալ, պիտի դիմէ հարկաւ:

Բանասիրականը կ'մասնաւորի այս ընդհանուր օգտէն, և միայն բանասիրաց մտքերը զուարճացնելու կ'ծառայէ. ազգիս գրականութեան ոյժը ոճընտիր բանահիւսութիւններու և ոտանաւորներու մէջ հայկաբանական լեզուով կ'չափէ. շատ ըին ևս գրաբառին մէջ զարգանալու փափագը գուցէ՛ կ'լցնէ. իրենց ակնորժակին յարմար յօդուածի հանդիպելով:

Բարոյականը միայն է՝ որ մասնաւորապէս մեր հոգևորական կարգակից եղբարց համար կ'հարկադրուինք գրելու, և նախ ցանկալի կ'լինէր մեզ և գրեթէ լրութեան ազգիս, թէ որ առաւելապէս քահանայ քփոքրիկ բաժանորդական գումարով այս դիւրութեան ճամբան ձեռք առնէին ի-

րենց խրատուց և ծանուցական գլուխներուն մէջ, որք դժբաղտաբար ժամանակին ուսմանէ զուրկ մնացած են, և հիմա սոյն հոգևոր պարտաւորութիւնը կատարելու հարկադրուած. ժողովուրդը աստուածային պաշտօներգութեանց մէջ ևս սուրբ գրոց խօսքերով մխիթարելու հարկը իրենց վրա ունին. բանն կենաց քալողէլու հրամանը ՚ի ժամու և ի տարաժամու՝ Վրիստոսի քաղցր և հեզ լուծին տակը խոնարհելու օրէն՝ յաշակերտութենէ առած են, ուստի բարոյականին մէջ մեր նպատակը այս է. որ ինչպէս գրել ենք յառաջաբանին մէջ, սուրբ և արտաքին գրոց նիւթաւոր խօսքերը բացատրելով, որքան կարելի է մեր հոգևորական դասակարգութեանը քարոզութեան ճամբան դիւրացնենք, այնպիսի ոճ բռնելով. որպէս զի հասարակութիւնը ազգային յառաջադիմութեան ոգւով քաջալերուի:

Եւրոպայի մէջ զանազան ամսաթերթեր կ'հրատարակուին ժողովրդոց ուսումնասիրութեան եռանդը վառելու. որոց ամէն մէկը կարելի է ասել, որ առանձին մէկ նիւթի համար կ'երնեն. և ամէն մէկը առանձին ցանկացողներ ունին մեր ազգին մէջ մինչև հիմա ելածներ ու յարատւողները տակաւին քաղաքական թերթեր են, թէ որ եղան բանասիրական Վմսաթերթեր, նոքա ևս տեղողութիւն չունեցան թէ՛ Ուսաստանի և թէ՛ հաճկաստանի Ղզգայնոց մէջ, ուր այժմ սուրբ Երուսաղէմի վանքէն կ'հրատարակուի

Միտն ամսագիր, որու յարատեւութիւն մտղթելով 'ի սրտէ, կ' յուսանք 'ի շնորհս ազգիս յարատեւութիւն գտնել և Մքարատ ամսագրիս Մտուծոյ օժանդակութեամբ:

Մեր եկեղեցական կարգաց և ծխոց սկզբնաւորութեան ժամանակը և որպիսի եղանակաւ հաստատութիւն առնելը՝ որքան որ հասարակ եկեղեցականաց ծանր և խորին խնդիրներ են, այնքան ևս նոյն կարգաց և արարողութեանց գործադրութիւնը պարզ և հասարակեալ է իրենց, այսպէսով հասարակ ժողովուրդնէլ ամէն օր այս ամէն սրբազան արարողութեանց ներկայ լինելով 'ի պաշտամունս եկեղեցւոյ գրեթէ՝ սոցա տեղեկութիւնը ևս նոցա յառաջը հասարակեալ է, ուստի՝ թէ եկեղեցականք և թէ՛ հասարակութիւնը ազգիս՝ աւելի տեղեկութիւն ունին եկեղեցական պաշտամանց վրայ, քան թէ՛ նոյն պաշտամանց երբ և յուամէ՛ սկզբնաւորելուն:

Աստի Մքարատայ կրօնական մասին մէջ կ'դրնենք ընդհանրապէս մեր ազգի 'ի քրիստոնէութիւն դառնալը, և առաքելական յաջորդութիւնը Հայաստանի մէջ. եկեղեցական պաշտամանց և ժամակարգութեանց վրա մանրամասն տեղեկութիւններ, որքան մեր Եկեղեցւոյ սուրբ հարց ձեռագիր գրուածքներէն կարող ենք քաղել, թէ որոյ ժամանակ որպիսի ժամակարգութիւն սահմանուցաւ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ:

Իսկ ազգիս հեթանոսութեան ժամանակի կրօնական պաշտամունքը առանձին կ'դնենք 'ի կարգս բանասիրականին:

Կարճ Հայոց 'ի քրիստոնէութիւն:

Սուրբ գիրք կ'ուսուցանեն մեզ որ Վրիստոս աէլն մեր իւր քրիստոսական Եկեղեցին կազմելու՝ ինքն նախ սկսաւ քրիստոնէութիւն քարոզել Հրէաստանի մէջ. "Օ, որ սկսաւ իսուս առնել և ուսուցանել":

Այս ժամանակ ահա՛ մինչեւեւ կռապաշտութեան խաւարին մէջ կ'ծփայր բոլոր աշխարհք, և ասուածանգիտութեքողը մարդոց սիրտը և մտաց աչքը կ'առագաստէր, Մտուածորդւոյն հրաշից ճաճանչները սուրբ քաղաքէն մինչև Մելքաբետաց հորիզոնը լուսոյ շառաւիղէն աւելի ցայտել սկսաւ, որպէս ելբեմն աստղ նորա յարեւել, և երկրի մթնոլորտէն անասուածութեան ամպը չ'հալածած Հայոց անգրանիկ լիպագաւորին Մքարատ սրտի անգիտութեան խաւարը փարատեց և մտաց աչքը անշամանգսղ լուսաւորեց. որով և ճշմարտութեան ճանապարհը ճանաչելով, առանց զՎրիստոս անձամբ տեսնելու՝ հաւատաց ու հաւատոյ սիրովն ասաց. "Այն զօրութիւնք ոչ մարդոյ են, այլ Մտուծոյ. զի չիք դժ մարդկանէ, ոչ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն Մտուած":

Աստ այսմ Հայոց ազգն եղաւ առա-

ջինը որ Վրխատտի Վստաւածութիւնը  
 ճանաչեց և նորա սուրբ Վետարանի փրր  
 կարաք վարդապետութիւնը գրկեց որով  
 և արդարև քրիստոսական երանութիւնն  
 ևս առաւ զոր չ'տեսած հաւատաց ՝ մինչ  
 դեռ ուրիշ ազգերը խորին կռապաշու  
 թեան մէջ ընդարմացած կ'խորդային և  
 մեր անդրանիկ և նախնածայ արքայէն  
 յորդորանաց և դարձի ձայներ կ'լսէին  
 իբրև թէ արեգական լոյսը ծագած և նոքա  
 գիշերուան մէջ քնանային :

Հարունակելի



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Ղրարատայ մեծ և առաջին պարտքը  
 լինելով հայրենասիրաց փափագը գոհ ա  
 նելու համար Հայաստան աշխարհքին  
 վրա ընդհանրապէս տեղեկութիւն տալ  
 նորա պատմաբանական մասերուն ստորա  
 գրութիւնը կ'անենք որպիսի Ղրարա  
 տեան նահանգն է հայոց թագաւորաց բնա  
 սուր կայանք նորա գաւառացը լեւանց  
 և գետոյ օդոց և բերոց որպէս զի նո  
 ցա մէջ նախնեաց հնութեանց քաղաքաց  
 տաճարաց և վանօրէից ստորագրութիւնները  
 կարդալու ժամանակ նոցա վրա լոյս սու

նելուն տեղ յառաջները մթութիւն չենէ  
 Ղյա գաւառաց մէջ որոց առաջինքն են  
 հայաստան երկրի դաշտն արարատեան ա  
 պնջական հինաւուրց և աղստն Վասեաց  
 որու ստորոտէն բազուկ առ բազուկ բս  
 կսեալ կ'ըջապատեն զդաշտն ծաղկա  
 լէտ և աղբիւրահոս լեռինք Ղրագածո  
 տն գաւառ և Ղիրակ սոցա մէջ ան  
 թիւ և անհամար կեցած են կործան և  
 կիսակործան աստուածաշէն և շքեղա  
 զարդ վանքեր ուր թագաւորական Ղնին  
 մայրաքաղաք քերուբաքանդակ աշտարակ  
 ներով և նկարազարդ պալատով ի վէմն  
 արաստոյս և յորձաքարս աղխաղխեալս  
 շուշանաբեր հովտաց մէջ կանաչադեղ  
 և զուարթածաղիկ դաշտերի երեսը ե  
 դեմաբուղխ արծաթափայլ գետերով  
 պատած քաղցրաշունչ և առողջարար  
 օդոց շնչելով արգաւանդաբեր և պա  
 րարտարօտ պարտէզներու ծաղկանց հետ  
 կ'ծիծաղի ուր հիւսիսը կ'գայ ուր հա  
 ռաւ կ'հնչէ այն այս երկրային դրախտը  
 քառասուղ և քառավաղ գետերու և  
 աղբիւրներու մէջէն եգեմական դրախտին  
 տեսքը կ'բերէ տեսողաց աչքին որոց մէջ  
 նախամարդոյն հայ սերունդը կ'բնակէ  
 ի գործել և ի անկել  
 Հայաստանի այս ամէն աշխարհագրական  
 դրից վրա որ ժամանակ ժամանակ ազ  
 գային գրիչներ պակաս եղած չեն ոմանք  
 լեռներու ոմանք գետոց և այլք քաղա  
 քաց կամ վանօրէից ստորագրութիւն տալով  
 իրենց գրուածոցը մէջ ի սոցանէ ոմանք  
 Վրդշէ սուրբ վարդապետի ստածին պէ